

ՍԻՄԵՆՆ ԳՊՐԻ ԼԵՀՈՑԻՈՑ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԷ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՌՈՍ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ ՅԱՄՍՆ

1608—1619:

ՅԱԻԵԼՈՒԹ՝ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅՔ Ի ԼԵՀՍ (1621—1635)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ

(Շարունակութիւն:)

6. ՎԵՆԵՏԻԿ

Ապա հասաք ի գեղեցիկ նաւահանգիստն ի մեծահամբաւ եւ ի հռչակաւոր, զարմանալի քաղաքն եւ աստուածաշէն կղզին մեծն Վէնէտիկ: Եւ երկու աւուր ճանապարհէ ծովով կ'երեւէր Սա Մարքոյն զանկախատուն եւ եկեղեցիքն, որպէս զՊղնձէ քաղաքն:

Եւ կացաք անդ երկու ամիս ու կէս. զի կայր Հայոց քարէ հաստատ եկեղեցի մի՝ հոգէաներով, խցերով, այլ եւ զարպասնի, սեղանատեղք եւ օթեւանք հիւրոց<sup>1</sup>: Եւ կայր անդ էրէց մի եւ երկու հարեղայ: Այլ եւ տեսաք չորս եպիսկոպոս աղթարմայ. մին Յայճի Յովանէս. մին Մարտիրոս, մին Ղազար Արճիշեցի. մին Պետրոս Կառկոցի. քանի ալ Սպանիայ ասին կայ. ամէնքն զարձուած: Եւ կայր տասն տուն հայ. այլքն աղթարմայ: Բայց պէրկան շատ կայր:

Եւ էր այս քաղաքս յոյժ զարմանալի եւ ամենայն մարդկան սքանչելի. զի ոչ կղզի է եւ ոչ ծով կամ ցամաք, այլ ի մէջ ծովու որպէս արձանն Հերակլեայ, շինեալ բազմածախ եւ մեծամեծ ամուր հիմամբ. զոր այնպիսի շինուածք եւ եարուք չէ տեսալ մարդ. եւ զատ ի Աստուծոյ ոչ ոք կարէ շինել: Եւ ջրին մէջն մարդապոյ սնտաշ քարով եւ վիմուռք հիմնարկած. եւ փողոցքնին ամէն ջուր է:

13 յարճիչեցի:

<sup>1</sup> Խօսքը Ս. Խաչ Եկեղեցւոյ մասին է. յիշեալ եպիսկոպոսներն այլուտ անձանք են, եթէ չեն «Յովհաննէս եպիսկոպոս Զեթունցի, Մարտիրոս եպիսկոպոս Աշտուռ, Ղազար եպիսկոպոս Հալապոյ», որոնք ստորագրած են 1585ին Աղարիա կաթողիկոսի տ. Գրիգոր ԺԳ. Բաճանայապետ գրած թղթին տակ. Ա. Վ. Պալճեան Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս. Վիեննա 1878, էջ 313:

ՍԱՆ ՄԱՐԲՈ

Եւ նախ զնացաք ի Սա Մարքոն, որ է Մարկոս աւետարանիչն. եւ է աւագ եւ մեծ եկեղեցի: Եւ կայր վերեւն զմպէթին առջեւն իրեք սղնձէ սիւն, որ ի հանգիսի աւուրս անդր խաչալամ կանգնեցնեն. եւ ի վերն սպեարէ չորս ձի ամեհի: Եւ Սա Մարքոյն զուսն բարաւորքն եւ վերեւն եւ դուռն ամէն պղինձ է. եւ այնպէս արվեստ, փորուածք եւ քանդակք է սահմանած, որ զարմով չեն կարել այլ տեղ զրել կամ նկարել. եւ քանի մարդ որ հայէր՝ չէր յազիլ ի գեղեցիկութենէն: Եւ այն ձիանքն թափած զինչ ոսկի կու փայլէին, զոր հային ի վերայ միմիանց որպէս կենդանիք: Եւ այլ ի վեր շուրջ զուսն պայրցն կոտած էր եւ քանդակած ի սպիտակ մէրմէրէ գերկոտասան առաքեալսն եւ չորս աւետարանիչս եւ այլ սքանչելի իրս:

Եւ ի ներս մտեալ տեսաք զարմանալի շինուածս եւ կամարս: Եւ բուն չորս կողմ եկեղեցուն զուսր ոսկով եւ լաճվարթով փուսուսի զամենայն անօրինականքն Բրիտանիա եւ սրբոց՝ զանազան գեղօք: Եւ յաւագ խորանին առջեւն երթեալ երկրպագեցաք Աստուծոյ եւ սուրբ Աւետարանչի. մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոց: Եւ մատեաք յառաջ, ուր էր մարմինն Մարկոսի ի մատուռ մի, որ էր ի սպիտակ եւ աղնիւ մէրմէրէ եւ անդիւտ. խուպայ էր շինած ի վերայ իրեք սեան, զի ասեն թէ ոսկոյ պարպար է. եւ ի գիշերի լոյս տան առաւել քան գեանարտաշն: Եւ զուսկոյն վերեւն հանած էր սաֆի ոսկով զսուրբն Մարկոս, որ տեսողքն պշուցեալ հայէին եւ բերանարաց լինէին: Նաեւ գետինն ամէն փուսուսքէր էր: Եւ զինչաշխարհս եղել զնացել, անդր տեսանես. այլ եւ որչափ կենդանի կայ աշխարհս, թէ գազան, անասուն, թռչուն, անդ գտանես: Իսկ խէտուածէ մէրմէնուն աշքն մարդուն խամաշմիչ կու լինէր եւ չի խմիչէլ մարդ կոխել զայնպիսի բազմահար արվեստն իմաստնոց, զոր այժմ ոչ ոք կարէ առնել զայն:

Եւ ասին թէ Սա Մարքոյն խաղնին չէր սէր եւ համար չկայ. զի անթիւ է գանձն եւ խաղնիան նորա. եւ ամէն քաղաքն նորա զբամբի կու շրջին: Եւ կայր աւագ խորանին առջեւ իրեք լալ մեծ հաւկթաշափ. եւ մէկն

43 յերս: — 53 զոր սպիտակ չիք էր ի:

ասին թէ հարիւր հազար կոռ զ'ափէ: Եւ կայր շամ չըախ մի, որ է լուսատու աղն. ասին թէ Կոստանդիանոս թագաւորին խաղնէն ելել է, զին չունի, ոչ խըլմէթ. իրեք տարպա, հարիւր հազար ոսկի կարմիր կ'ափէ եւ այլ աւելի, զի ճրագի պէս լոյս կու տայ: Եւ այլ տեսաք տասն մարդարիտ կախ՝ ազաւնոյ հաւկթի չափ. թող եաղութիքն, զուսկոյն արմանին, զմրուխանին եւ այլ ճուհարնին, անդին 'ւ աննման: Այլ եւ տեսաք քէրկէրտանի կոտոշ ճշմարիտ եւ ստոյգ, որ խաղնիայ մի կ'ափէ: Չայսպիսի անգիւտ եւ անդին ճօհարնին հանդիսի օրեր զուրս կու հանեն. այլ օրն կու պահեն: Իսկ զոսկեղէն եւ զարծաթեղէն անօթան ո՞վ կարէ թուել: Եւ կայր Ստամպոլցի ճօհարտար մի ի հօն. նա զարմացեալ ասաց, թէ Ամէն ճուհար վէլիաթ մի կ'ափէ: Եւ մեք զայս ամենայն տեսեալ զոհացողական փառս մատուցաք Աստուծոյ, որ այտպէս փառք եւ մեծութիւն եւ պերճ ճօթութիւն է ավել քրիստոնէից եւ իշխանութիւն: Իսկ մեք վշտալի կենօք յայսմ ամենայնէ զրկեալ եւ գերի եղեալ այլազգաց եւ Տաճկաց վասն մեղաց մերոց:

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Եւ այլ օր ելաք ի Ջանկախատուն, որ էր երեքհարիւր աստիճան բարձր մինչ ի զանկահն. եւ անտի մինչ ի վերին զուսան ուր խաչն է՝ հարիւր աստիճան: Եւ ի գլուխն զապաթան շինած է թէսնիֆով թափած սպէտրէ հրեշտակ մի մեծ մարդապոյ մի, որ ներքուստ վարէն իրեւ զթուռն կ'էրեւէր. ունէր մին ձեռն սուր եւ միւսովն մատամբ ցուցանէր, զի այս հրեշտակս խուլալուզ էր նաւորգաց եւ ամենայնի. զի այնպէս իմաստութեամբ տրիսմ էր զուգած, որ քամին ուստի կ'եղնէ՝ այն կողմն մատամբ ցուցանէ:

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍԱՐԱՅՆ

Այլ եւ կայր Սա Մարքոյն առջեւն մեծ մօյտան. եւ ներքեւն ծով. եւ ձախ զիհն թագաւորին սարայըն է՝ յոյժ զարմանալէն, յոքնարեղուն եւ բազմայարկ. եւ իւր նստած տունն զուսր ոսկով ձեկած է, վարախով եւ լաճվարթով. աղնիւ արվեստ եւ բան անցուցած, եւ նախաշ. այլ եւ մէրմէրէ շինած սղզի ազգի կենդանիք, զաղանք եւ անա-

78 հարիւր: — 82 բունգոուն: — 112 յօքնափեղուն:

սունք: Եւ սարային զուսն չէմն վերն եւ բարաւորքն խիստ աննման եւ զարմանալի. ոչ դարով, ոչ լեղուտ մարդ չի կարէ պատմել: Եւ ի վերայ զուսն սպիտակ մէրմէրէ իրեւ գկենդանի զուգած էր կոյս մի գեղեցիկ, որ սենէր թագ ի գլուխն ընդելուզեալ մարդարտով եւ ահամբք մեծազնով. եւ ունէր յաջ ձեռն սուր երկասյրի մերկ. եւ ի ձախն կշիւք. եւ էր զրեալ թէ թագն թագաւորութիւնս նշանակէ եւ կոյսն՝ զկուսութիւն քաղաքիս նշանակէ, որ ի սկզբանէ մինչեւ ցայսօր ոչ անկաւ ընդ ձեռամբք ումեք եւ ոչ տիրեաց ոք ամա եւ ոչ ծառայեաց այլում եւ ոչ ոք ի թշնամեաց տիրեաց կամ գերեաց. այլ մնաց անյաղթ եւ անխախտ որպէս զկոյս աղջիկ: Իսկ կշիւն զարդարութիւն նշանակէ, որպէս եւ ի զիրս ամենայն ուրեք զարդար զատաստանն ցուցանէ: Իսկ սուրն մերկ զբարկու- թիւնն Աստուծոյ ըստ Պօղոսի. Զի թէ զրկէք զմիմիանս եւ անիրաւիք եւ չլինէք որպէս զմէսս կշոց, նա սուրս այս մաշեացէ զձեզ: Վասն որոյ տեսեալ զահագին սուրս պատրաստ կացիք:

Եւ կայր հանդէպ սարային տատապիտանա մի ամուր որպէս բերթ, զարմանալէն, որ չկայ յարարածս նման նմա: Եւ զուսն երկու կողմն դրսէ շինած էր երկու մեծ եւ անճոռնի ծովային մարդիք ի մարմարէ, մերկ եւ խայտառակ. եւ ունէր մինն ի ձեռն հաստ բիր մի եւ միւսն մեծ քար. եւ թէ ոք կամէր ի ներսն մտանել՝ կարծէր թէ կամին հարկանել: Եւ տատապիտանին վերեւն զուգած էր մարմարէ զշինող վարդապետն ու զիւր բանվորն. եւ ամէնին ձեռն հանգանակ բան մի, զոր ոչ կարեմ գրել մի ըստ միովէ:

Եւ մերձ ծովուն ի մօյտանն կայր երկու մեծ սիւն մերմէրէ. մէկին վրայ սուրբն Գեորգ ձիով եւ գեղարդով. եւ վիշապն թափած ու պղնձէ. եւ միւս սեանն վրայ ահագնատեսիլ վիշապ մի:

ՍԱՀԱՊԱՏՈՒՆ

Եւ յաջակողմն կայր Մահաթատուն մի, բարձր քան զաշտարակ: Եւ աղաչեցաք որ հանին զմեզ ի վեր. եւ ելեալ ներքի խուպան՝ տեսաք յոլով սոյապնի, եւ անիւք երկաթի, որ շուրջ ամէն զսահաթն. եւ վերսեւանց շինած էր որպէս բոլորակ մի, որպէս

118 սարային: — 134 ուրէք: — 134 գատասղանս: — 154 կ. որ է Մահման, եւ...:

եւ այլ տեղաց սահաթսն. եւ կայր երկաթէ  
 ձեռք մի ի ճոթն, որ այն ծրին գրեքն կու ցու-  
 ցանէր մատամբ, թէ քանի սահաթ է. եւ  
 10 միւս ծայրն լուսին: Եւ միջին տապաղան այլ  
 հնար արվեստից դէսնիք անէր. նման լուսնի  
 սափի կապուտ լաճվարդով, եւ թէ երկինքն  
 լուսինն հնանար, այն կապուտ բոլորակին  
 միջի թօփն որ կէսն կապուտ կէսն դեղին այն-  
 15 պէս երեւէր թէ նոր եւ նա նոր. եւ այնու ճա-  
 նաչէին ամենեքեան հինն եւ զնորն: Եւ այլ  
 վերն առիւծ մի անագին եւ դարհուրելի, որ  
 է սուրբն Մարկոս ըստ տեսլեան Եղեկիէի  
 մարգարէի եւ այլոցն, որ ասէ թէ Տեսի եւ  
 20 անա չորք կենդանիք. դէմք միոյն արծւոյ,  
 որ է Յոհանէս աւետարանիչ. դէմք երկորո-  
 դին Եզն որ է Ղուկաս, դէմք երրորդին  
 մարդ, որ է Մատթէոս եւ դէմք չորրորդին  
 առիւծն՝ որ է Մարկոս, վասն այն յամենայն  
 25 տեղիս եւ ի դրունս քաղաքին, նաեւ նաւուց  
 էլքանին զնա նկարեալ էր. զի այս դաւառս  
 ամէն Մարկոս աւետարանչի վիճակն է: Եւ  
 ունէր առիւծս այս ի գիրկս աւետարան եւ  
 այնպէս խոթուեալ հայէր ի մարդիկ որպէս  
 30 կենդանի. եւ տէր քաղաքին՝ տուքա՝ չոգած  
 առջեւն խոնարհ իբր թէ համար եւ հաշիւ  
 կու տար դանձուց եկեղեցուն, թէ չեմ վատ-  
 ներ, չեմ կորուսեր կամ ի մարմնաւոր պէտս  
 իմ չեմ ծախել, եւ դրամի մի չեմ ազահել.  
 35 եւ տեսողացն այնպէս թուէր, թէ կամի պա-  
 տառել զնա:

Եւ այլ ի վեր ելեալ տեսաք փայտէ չի-  
 նեալ գիրեք թագաւորան. եւ ոսկի վարախով  
 ձեւիած. եւ այնպէս թէսնիք էր արած որ երբ  
 40 դմարդ տեսնուին՝ զգտական ի վար կ'առ-  
 նուին. եւ մեք զայն տեսեալ՝ ներքուստ փա-  
 ռաւորեցաք զԱստուած, զովիչն իմաստու-  
 թեան մարդկան:

Չոր ի հանդիսի աւուրս ի դուրս ելանն.  
 45 զի կայր երկու կողմանց երկու դուռն. եւ  
 դռանց մէջն մեծ մօյտան, լաճվարդով յօրի-  
 նած եւ աստեղօք զարդարած՝ նման երկնային  
 կապուտակին. եւ այն կապուտի մէջն սպի-  
 տակ մարմէրէ քանդակած յոյժ գեղեցիկ՝  
 50 զԱստուածածինն, ունելով զմիածին իւր ի  
 գիրկն. եւ կայր գլխուն վերեւն որիչ եւ գատ  
 մեծ աստղ մի պայծառ քան զայլս: Եւ յոր-  
 ժամ գատիկ լինի կամ ծնունդ, այլ հանդիսի  
 55 կակ մի հարկանի եւ յինքեանց բացվին  
 դրունքն եւ ժողովի բազում անբոխ ի տեսն:

Եւ ելանէ յաջ դրանէն նախ Գարրիէլ հրեշ-  
 տակապետն ունելով փող ի ձեռն. եւ զկնի  
 Մելքոն թագաւորն եւ սպա այլքն մի զհետ  
 միոյ պար առեալ. եւ անցանէն առաջի Տի-  
 րամօրն՝ խոնարհին եւ զթագս ի վար առնու-  
 եւ ընծայս ի ձեռս ունելով, իբր թէ մատու-  
 ցանն նորածին մանկանն որպէս կենդանիք  
 եւ սպա մտանն ընդ միւս դուռն ի ներս. եւ  
 դուռնքն փակին:

Եւ անտի ելաք ի դուռնն ուր սահաթի  
 էր. տեսաք զանկակ մի մեծ եւ երկու կողմ  
 մանց երկու սեւ եթովպացի արասպ, մեծ եւ  
 115 զօրաւորք, մերկ եւ ամօթոյքն երեւէին ակ-  
 ներեւ ամենայնի, ունելով երկու ձեռս մեծա-  
 մեծ կռանս. եւ յորժամ սահաթի ժամն լի-  
 նէր՝ հարկանէին կռանով զգանկակն, որպէս  
 կենդանիք. մին՝ մին զիհաց եւ միւսն՝ միւսն  
 120 Չոր եւ զայս ամենայն տեսեալ օրհնեցաք  
 զհրաշագործն Աստուած, որ այսպիսի է ակի-  
 սրդոց մարդկան. որպէս եւ ինքն իսկ վիպի-  
 իւր ամենատարբ բերանով, թէ իմաստնա-  
 125 պոյն եւ որդիք աշխարհիս այսորիկ քան զոր  
 զիս լուսոյ յազգս իւրեանց. փառք Աստու-  
 ծոյ. ամէն:

Անտի դարձաք ի տուն:

ՎԱՆՈՐԱՅՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՔ

Եւ այլ աւուր ելեալ շրջեցաք ի մէջ քա-  
 130 ղաքին եւ տեսաք զարմանաչէն տներ ի մէջ  
 խորս ծովու՝ յոյժ բարձր, չորս, հինգ, վեց  
 տապաղայ եւ կամարակապ բարձրաբերձ  
 նոյնպէս կամուրջս անտես եւ անհնարին զոր  
 տեսողացն:

Այլ եւ տեսաք վանք մի գեղեցիկ եւ իսկա-  
 վայելուչ զմայէթաչէն կամարակապ. այլ եւ  
 բազում վանորայք հարեղայից եւ կուսանա-  
 135 եւ մեծամեծ եկեղեցիք զուտր մարմարե-  
 նեայ, ամէնն փառաւոր մի քան զմի վայել-  
 լուչ. զի աչք հազար պիտի տեսողացն:

Եւ ասին թէ վանք մի կայ մեծ, որ հինգ  
 հարիւր կոյս աղջիկ կայ ի նմա. եւ այն վանք  
 140 ընկենուն տղաք պոռնիկ կանայքն: Չի այս  
 պիտի սահման կայ յաշխարհն Փռանկաթ  
 ամէն քաղաք կայ եկեղեցի մի ապաստանիք  
 որպէս ի հինն ութ. զի թէ ոք մարդ սպա-  
 նանէ կամ այլ ինչ եօթն մահացու մեղ-  
 145 զործէ եւ փախչի յեկեղեցինն այն ազատ  
 եւ այլ ոչ ոք իշխէ զնա հանել անտի, եւ եթ  
 եւ թագաւորն գայցէ:

Եւ վանք մի այլ կայ կուսից. որ ինչ բող  
 105 կամ այրի կամ կոյս յղացի, նա գիշերով  
 բերեն եւ այն վանքն ձգեն. զի կայ պատու-  
 հան մի եւ վերեւն զանկակ մի. անդ զնեն  
 զտղայն եւ զարնեն զանկակն. իսկոյն իմանան  
 եւ դան առնուն տանին զբիճն փութով եւ  
 110 սնուցանեն կաթամբք այժից եւ ոչխարացն,  
 մինչեւ զարդացի եւ ի չափ հասակի հասցէ:  
 Ապա մայրապետն կոչէ զամենայն կուսանս.  
 կոչէ եւ զտղայն ի պոռնկութենէ ծնեալ ա-  
 115 ղաւի իւր, թէ արու լինի եւ թէ էգ. եւ ասէ  
 ցնոսա. Որդեակք իմ եւ դստերք, գիտէք զի  
 մեք չեմք ձեր մայրք, այլ դուք այսպիսի  
 ծնունդէք: Եւ զամենայն մի ըստ միոյ՜ ճա-  
 նուցանէ նոցա. ապա քարոզէ նոցա զօրհնս  
 եւ զպատվիրանս Աստուծոյ. այլ եւ ցուցանէ  
 120 նոցա զճանապարհն Աստուծոյ եւ զաշխար-  
 հիս՝ զհոգեւորն եւ զմարմնաւոր: — Ձի աշ-  
 խարհն Փռանկի կոյս աղջկունք եւ կանայք  
 բուն վարդապետք են. եւ չկայ մարդ մի որ  
 կարդալ չզրիտնայ. նաեւ համալին, կէմի-  
 125 ճիւքն, խաթըրճիք եւ հովիւքն եւս: — Դառ-  
 նայ եւ ասէ զարձեալ.

Ով որդեակք, մինչեւ ցայս տխմար եւ  
 ազէտ էիք. եւ արդ իմաստուն եւ կատարեալ  
 էք. որ գիտէք զչարն եւ զբարին. զի մեք  
 130 վասն Աստուծոյ սիրուն պահեցաք զձեզ եւ  
 սնուցաք եւ որպէս մայր զամենայն շարչա-  
 բանս ձեր յանձն առաք. այլ եւ դուրբ գիրս  
 ուսուցաք ձեզ: Արդ այժմիկ ասացէք մեզ  
 զի՞նչ է կամք ձեր. կամի՞ք աստ մնալ եւ ճա-  
 135 ուայել Աստուծոյ մինչեւ ի մահ, թէ աշխարհս  
 մտանէք եւ ամուսնանայք: Իսկ որք լցիալ են  
 սուրբ հոգով՝ ասեն. Սուրբ մայր եւ հոգեւոր  
 ծնող մեր, ոչ կամիմք ելանել աստի ի սուտ  
 եւ յանցաւոր յախտալի աշխարհս: Ասէ մայր.  
 140 Տեսէք եւ զգոյշ լերուք, զի Աստուծոյ ճա-  
 ուայելն զժուարին է որպէս եւ տեսանէք:  
 Եւ նոքա ասեն. Մեք կամաւ եւ յօժարու-  
 թեամբ յանձն առնումք զամենայն նեղու-  
 թիւնս եւ զչարչարանս յուսարով յողորմու-  
 145 թիւնն Աստուծոյ եւ ի ձեր սուրբ աղօթքն թէ  
 զմեզ անարժանս ընդունիցիք ի սուրբ վանս  
 ձեր: Եւ մայրն տեսեալ զձերմեռանդ սէրն եւ  
 զյօժարութիւնն կամաց եւ զփափազ սրտից  
 նոցա, յետ բազում խրատից եւ վարդապե-  
 150 տութեան կարէ զմաղն եւ զգեցուցանէ սքեմ:  
 Թէ էգ է, մնայ առ նոսա մինչեւ ի մահ ճա-

ուայելով Աստուծոյ. իսկ զարուսն առաքեն  
 հարեղայից վանս. երթեալ անդ եւ անչափ  
 ձգնին եւ կրթին ի վարս եւ ի կրօնս մինչեւ  
 155 լինին հարեղայ առաքինի: Եւ որք ոչ կամին  
 մնալ ի վանսն՝ ասեն թէ Սուրբ մայր, մեք  
 ոչ կարեմք ժուժել վանացս. տուք մեզ հրա-  
 ման ելանել աստի: Իսկ նոքա տրօք եւ պար-  
 գեւօք հանեն ի դուրս եւ ամուսնացուցանեն  
 կամ յայլ արվեստս տան: Եւ այսպիսի բարի  
 160 եւ շահաւէտ խրատովն ապրեցուցանեն զբա-  
 զում հոգիս անմեղ տղայոցն. եւ լինին պատ-  
 ճառ բազում բարեաց, զոր յայլ աշխարհ  
 վասն անի եւ ամօթոյ ոչ թողուն ծնողք յա-  
 165 ուաջ դալ անմեղ տղայոց, այլ զեղօք եւ պէս-  
 պէս շարիւք սպանանեն զծնեալս կամ չտան  
 ծնանիլ:

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՔ ԲԱՂԱՔԻՆ

Պատմեմ ձեզ եւ այլ սքանչելիս վանս  
 քաղաքին Վէնէտիկու, որ յոյժ հիացուհի  
 170 տայ լսողաց. բայց ազաչեմ զընթերցողս՝  
 չձանձրանալ: Եւ թէ որպէս հրաշիւք հիմնա-  
 ցեալ եւ կառուցեալ է մեծամեծ վիմօք եւ  
 լեռնանման քարօք ի վերայ ծովու. որպէս  
 կամուրջք ի վերայ գետոց, եկեղեցիք, տներն  
 եւ ամէն եաբուքն ծովու մէջ է. եւ բոլորն  
 175 ջուր, նա եւ փողոցնին ջուր է. եւ թէ կա-  
 միս ուրեք կամ առ դրացիս զնալ, փէրէմով  
 պիտիս երթալ: Այլ եւ այս սքանչացնէ գտե-  
 սողս, զի ծովս այս երկու անգամ երթայ եւ  
 180 գայ, յաւելու եւ նուազի նման Սելչովամ  
 գետոյն, որ ի ժամանակս Եսայիս մարդարէի.  
 սապէս եւ սա յետնուց մինչեւ յառաւօտն  
 սկսնու աւելուլ մարդապօյ մի եւ յառաւօտէ  
 մինչ ի յերիկուն նուազի եւ թերանայ. եւ  
 այնպէս սրընթաց երթայ եւ զայ արագ որ-  
 185 պէս գետ ակներեւ ամենեցուն: Եւ այսու  
 պատճառաւ ոչ ոք ի թագաւորաց կարաց առ-  
 նուլ զքաղաքս եւ ոչ կարէ, զի միայն չէ.  
 երբեմն ծով է եւ երբեմն աղտաղտուկ. զի  
 թէ նաւով դանձ մըխին եւ թէ ձիով՝ ինդթին  
 190 եւ ցամաքով անհնար է:

ՁԻՆԱՐԱՆ

Այլ եւ ցուցին մեզ զթէրսխանան, լայնա-  
 նիստ եւ անառիկ պարսպով, որպէս զգեակ  
 մի մեծ եւ շուրջանակի ջուր. եւ ասին թէ  
 կայ ի ներս հինգհարիւր դատրդայ, որ ամէն  
 195 զատրդայ կ'աժէ հինգհազար, ութհազար զու-

ուռչ կամ այլ աւելի. վասն զի չեն նման Ստամպոլայ, ոչ մալոնանուն: Եւ այնչափ մալ եւ խաղինա ունի, եարաղ եւ զէն, պարութ 200 եւ Ֆնտուխ, թօրեր եւ թֆարքնի, հարպաք եւ զրէհք եւ այլ զանազան զէնք պատերազմի: Եւ հիացաք թէ ուստի՞ է այսչափ պատրաստութիւն. եւ ասին թէ այս ամէնքս Սա Մարքոյին է. եւ թէ այսօր պիտի գնան, հազրեն: 205 Եւ որչափ ամալ, ինչիզար, կէմիք եւ այլն ամէն Սա Մարքոյին է. եւ ասին թէ հէսարսիզ մալ ունին, զի այլ այսպէս փարթամ եկեղեցի չկայ արարածս: Թէպէտ Սան Պետրոս ունի մալ եւ խաղինա, ասլա ի խարճն շատ կ'երթայ, եւ նա վէքիլնի չունի, որպէս սա: Ամէն աշխարհ, նաեւ քաղաքացիքն յոյժ պերճ եւ հարուստ են. որ այն քաղաքն թէ ոք հինգհազար, տասնհազար զուռուչ ունենայ, կու արմնան թէ այն սէֆիլ մարզն որպէս 210 կ'ապրի: Եւ է հիանալի, զի վանատիկ խիստ սղութիւն է, մարդաշատ եւ սըխ չէնիլք. եւ ծոփն առել է զբոլորն, ցամաք չկայ. հացն սակաւ եւ ջուրն անձրեւի, տներն ամէն վիմաց, եւ գնոջ. միան եփելու քսան դրամ, 220 նոյնպէս հաւն: Եւ բնաւ ջուր չեն ըմպել, այլ զինի. եւ քաղցր ջուրն այլ տեղաց կէմովք բերեն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւ ասին թէ ԻՌ համալ կայ, ԽՌ փէրէմա, ԽՌ քօրբու, ԽՌ բող, ԺԳՌ կարգաւոր, 225 ՅԿԵ մեծ եկեղեցիք մարմարէ՝ արանց եւ կանանց, սբիտալովք: Պաղչանի եւ դարպասնի, այլ եւ բազում օթեանք հիւրոց, հիւանդաց, հոգմանոց, որ վասն սիրոյն Գրիստոսի զեղ տան տկարացն: Եւ զայս ոչ 230 եթէ ի սամիկ մարդկաց լուաք կամ ոչինչ, այլ ի անուանի եւ տօլլաթաւոր տեղացոցն: Եւ չէ զարմանք, զի սահմանք է Ֆոանկաց ամենայն ինչ ի տէֆղարն անցնել. եւ ոչ թէ միայն զմեծ բան, այլ եւ զոչինչն: Այլ եւ ասին թէ օրն ԲՌ զուռուչի սավրղ կու ծախվի 235 եւ ԲՌի ձուկն, նոյնպէս եւ զայլն իմասցիս:

ԿՈՒՍԱՍՏԱՆ

Եւ այնպէս հարուստ բողեր կան, որ մէկ բողմի շինել է վանքմի երկու միլ հեռի ի քաղաքէն, գուտր մերմէրէ ի մէջ ծովուն, այսպիսի կերպիւ. զի զՉաղեալ նա ի մեղաց եւ 240 ի չար գործոց, շինեաց զվանս եւ ժողովեաց

220 հարն: — 221 բաղրբը:

զկոյս աղջկունս եւ նոքօք մտաւ յինքն՝ ծուայել Աստուծոյ: Եւ է վանքն մինչեւ ցայ օր, զոր մեք աչօք տեսաք: Եւ ասին թէ Մֆլորի է գնացել ի շինուան եւ ՄՌ ալ թող է վանիցն վախրֆ. զի որչափ կոյսք լինին անտից ուսեն եւ ըմպեն:

Եւ այլ բազում բանս եւ հրաշալի լի տեսաք եւ շինուածս զարմանալիս եւ անտես տեսաք, զորս ոչ կարեմ գրել զամենայն մըստ միոջէ եւ ծանուցանել ձեզ, սիրելի եղբարք իմ, զի բազմութիւն խօսից տաղաղկութիւն տայ լսելեաց եւ յաճախուան խօսից ձանձրացուցանեն զընթերցողս եւ քուն ածնունկնդրողացն:

Բայց միլ մի հեռի ի քաղաքէն կայր վանք մը ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ անուն, զոր ՀԱՅՈՅ ՎԱՆՆ կոչեն<sup>1</sup>, խիստ զարմանալի եւ պատվական անդր թողեն զչայք:

ԳՈՐԾԱՐԱՆ ԱՊԱԿԵՂՒՆԱՅ Ի ՄՕՈՒԱՆ

Կայր քաղաք մի երկու միլ հեռու՝ ՄՕՌՒԱՆ անուն, ուստի ելանեն ազգի ազգի աղնիւ ապակէ անօթք, Փինճանք, սուլաճիք զանազան դաւաթք եւ այլ յոլով բաներ, որպէս ի Ղալաթիայ կու ծախվի. այն ամէն անոր բանն է, զոր եւ ամէն երկիր կու տեսնին, նաեւ ի Լէհ, սաֆի պիլօր: Եւ ասին թէ ԽՌ այր եւ կին եւ կոյս աղջկունք են, որ զայս բանին. այլ եւ զհիլուն պօնչուխնիլն սուտ մէրջան, սուտ մարդարիտ. զոր վաճառուականքն տեղեակ են եւ զնոյք գործոյ նոցա:

ԽԱՆՈՒԹՔ

Եւ այնպէս փարթամ խանութիւք կան վէնէտիք, որ թէ ՆՌ, ԺՌ զուռուչի էսպարտ գնես, տեղն չերեւալ. եւ այնպէս հարուստ վաճառականք կան, որ մէկ մարդն մէկ կէմուն պութուն ըողակն կարէ գնել. որպէս եւ մեր հետ սօֆ եկել էր ԳՃ բէո, իրեք օրն ծախեց, հախլամիչ եղաւ, կէսն դրամ, կէսն ըսկէռէթ առաւ. զոր յայլ աշխարհ մին տեսրին չկարէր ծախել, անդ իրեք օրն ծախեց Այլ եւ բոլոր քաղաքն ամէն արվեստաւոր է են, որ ամէն աշխարհ ինչ բան դժար կարթօհվայ ուղենան, անդ գտանեն կամ շինել:

242 աղջկունս: — 247 ըմպեն: — 254 զընթերցողս: — 255 յունկնդրողացն:

1 Վանքը Բենեդիկտեանց կը վերաբերէր. ԺԳՊ քաղաքն սկսեալ հոն կը թաղէին Հայերը իրենց մեծ ունեւորը. հմմտ. Հ. Ղ. Ալիշան՝ Հայ-Վենետ, էջ 152—153, 162—163:

տան: Եւ են մարդիք աշխարհին այն յոյժ շնորհալիք, որ այլ աշխարհ չգտանին. միայն 235 հոգի չկարեն տալ. բայց այլ աշխարհ չգտանին. միայն հոգի չկարեն տալ. բայց այլ ամէն հանար կ'ելնէ ի ձեռաց նոցա: ԽՌ խախութ կայ. եւ ամէնն (ունին) Աստուածամօր պատկեր եւ կանթեղ. զի ազգն այն յոյժ 240 պատվեն զԱստուածածինն:

ՊԱՏԿԵՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Եւ կայր Սա Մարքոյին ձախ գիհն պատկեր մի սքանչելագործ որ հանապաղ երթ եւ եկք որ անցանէին՝ խոնարհեալ երկիր ծունր կրկնէին եւ զգտակնին ի վեր առնուն: Եւ ասին մեղ, թէ սքանչելագործ է, զի թէ ոք գնայ ծովով կամ ցամաքով, եւ յամէ, եւ ընտանիքն չի դիտենան՝ մեռած է թէ կենդանի, այն պատկերին առջեւ մոմ վառեն Սրբուհոյն. եթէ անցնի եւ չիջանի, զիրտացիր որ մեռած է, եւ թէ չի չիջանի, թէպէտ սաստիկ հոգմ լինի, կենդանի է. փա՞ռք Աստուծոյ:

ԲԱՅԹԱԼ

Եւ կայ մօյտան մի մեծ՝ Բայթալ կոչի, է ի մէջ քաղքին, ուր աղնիւ եւ մեծաղին չուխանին ծախվի, սկառլաթ, Կ. չլայ, Հ. չլա, 235 ձ. չլա, քարզիայ, Փալանտուչ, եւ այլն. եւ ասին թէ օրն հազար բեռ չուխի կու կապվի: Եւ կայր այս Ռայթալն զարմանալի կամուրջ յոյժ բարձր, իբրեւ զաշտարակ, իբր 240 Եալընկղկոյն Խայսարու, այնպէս որ մեծ կէմով ելքէնիքովն կ'անցնին. բայց վերեն փայտէ քօրբու կայ, գայն վերցնեն, որ տիրաքին ծայրն չի դիպի:

Եւ կայր տասներկու համալ, որ տարին տասներկու ամիս ամէն ի ժիր միշտ քեսայիւք կարմիր ոսկի սաֆի կու կրեն տառապխանէն: Եւ տեսաք խանութ մի ձկան ակոսայ, երկու մարդասօյ երկայն եւ հաստ:

ՆԱՒԱՄԱՏՈՅՑ

Այլ եւ կայր գնտան մի մեծ, ուր զվնասաւարան արգելուին եւ զմահապարտն ի զատրզան ձգէին, որպէս եւ ի Ստամպոլ: Այլ եւ կայր փոքր զատրզայ մի, որ եւ անդր ամէն օր քուրակ քաշել ուսուցանէին, մերկ եւ չլլախ. եւ ի չուսանելն այնպէս հարկանէին 245 ի վերայ մերկ մարմնոյն, որ արիւնն հոսէր. եւ այնպէս ուսեալ տային ի զատրզան պա-

տերազմողաց, զի զտգէտան ոչ առնուին: Եւ կայր ի զատրզանիս նոցա բազում Տաճիկք, երկիչարիք, սրահիք, գայիմնի եւ այլք, որ զմուրօքնին կնտած եւ այլոցն ածիլած, փայ- 330 գան զուգած էր: Եւ նոցա փէրէմայքն ուրիշ ցեղ էր. զի օձու նման կու սողայր եւ թռչէր արագ, զի տակն եւ յառաջն յետն սաֆի չալիկ էր երկայն. եւ այլ տեղ որ չորս կամ վեց քուրաքէիք կու քաշեն, նոցա երկու միայն եւ 335 այլոցն մի մի. եւ զայն կանգուն քարչեն եւ ոչ նստած՝ Ստամպոլայ պէս: Եւ այն փէրէման որ երկու մարդ է, մեծ է. եւ ի միջին սեղանատեղ երկու հոգոյ կամ իրեք. եւ վերեն ծածկոյթ աղնիւ չուխով կամ աթլաղով, ունելով 340 չորս փոքր փէնճէրայք չորս կողմանց, նման Լէհու քարթթայից: Եւ անդ նստեալ հետ եւրանուն եւ սիրելեացն կամ հետ նիկարնուն եւ զեղեցիկ կանանց եւ խորօտիկ կոյս աղջկանց՝ ուստն, ըմպեն զանուչ զինին եւ 345 զուարճանան. եւ որչափ կամիս շուր ածեն, մին յառաջ եւ մին յետուստ կանգուն, այնպէս վարեն, որ ելքենով կէմիք այնպէս չկարեն վաղել. եւ ներան նստեալ դու զամէնն տեսանես եւ զքեզ ոչ ոք. հետ ում որ կամիս 350 սաֆայ արա:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԻՐՔ

Եւ ասին մեղ, թէ տարի մի յառաջ քան զգալուստն մեր վէնէտիքնին զՆգուլիզնին արտաքսեալ վարեցին ի քաղաքէն վասն բազում պատճառաց. զի են կարգաւորքն այն խուլեցուցիչք եւ չիթթողք: Զոր նոքա բարկութեամբ գնացին առ Փափն գանդատ. եւ նա գրեց վէնէտիկցոցն որ ընդունին զնոսա եւ զեկեղեցիան տան ի ձեռս նոցա: Իսկ նոքա չար եւ լիբբք, պըռի եւ պիզմ մարդիկ են. զի ծովեղերացիք եւ եալուի մարդիքն բնական 10 սոպր եւ անհնազանդ են. ընդդէմ զարձան փափին: Յետ բազում զրուցաց եւ թղթոց՝ զրկեց իրիցնուն ամէնին, որ քահանայադործութիւն չառնեն, ոչ կարդ, ոչ եօթն խորհուրդ եկեղեցոյ կատարեն: Եւ նոքա երկեան 15 ի բանադրանացն եւ փախեան. եւ այլ պէգիրկան կամ մարդ չիշխէր մտնել վէնէտիք. ոչ կէմի գայր:

Յայնժամ իշխանն քաղաքին յոյժ բարկացեալ սրտամտութեամբ հրամայեաց հեծել ժողովել եւ Սա Մարքոյին մօյտանն արծթէ խա-

331 զուգէծ: — 338 սեղայնատեղ: 7 գնոսայ:

զուտին զարկին եւ ոսկի զընծըրով հիւսեցին  
 Իբր զչաթանն եւ մէջն ոսկի արծաթ լցին եւ  
 փողոցնին փող հնչեցուցեալ եւ տալալին  
 25 կանչէին թէ ով գա՞յ՝ լաւ հախ, այլ եւ պար-  
 դեւս տամ: Եւ այսպէս ժողովեցան աղբ եւ  
 աղինք բազում յոյժ:

Չայն լուեալ Փափն, եւ նա եւս հրա-  
 մայեաց գործողով լինել. եւ իբրեւ ետես  
 30 թէ Վէնէտիկուն բազում է եւ առաւել,  
 գրեաց զիր առ թագաւորն քրիստոնէից եւ  
 առ իշխանս եւ մեծամեծս, այլ եւս Ալամանաց  
 կայսրն, զալ հասանել յօգնութիւն (ընդդէմ)  
 հպարտացեալ գոռողին. եւ առ հասարակ ա-  
 35 մենեքեան առաքէին Փափին օգնութիւն, հա-  
 դարք հազարաց եւ բիւրք բիւրուց: Չոր իմա-  
 ցեալ իշխանն տուք՝ երկեաւ, զի գիտէր որ  
 չկարէր դէմ կալ հօր թագաւորաց. ապա  
 չարն վատ խորհուրդ արարեալ անասուածա-

40 բար ընդդէմ օրինաց առաքեաց առ խոնթբարն  
 Տաճկաց եւ սաէ թէ Յարեան ի վերայ իմ  
 ամենայն թագաւորք եւ իշխանք եւ չիք ինձ  
 այլ հնար, բայց թէ քակեմ ես զուխան եւ  
 զդաշինս իմ որ ընդ նոսա, եւ ընդ ձեզ արա-

45 բից ուխտ եւ սէր. արդ աղաչեմ զքեզ առա-  
 քեա ինձ այժմ փութով ձեռ հոգի. եւ ես մա-  
 շեցից զնոսա ի սուր, եւ զերկիր նոցա ի  
 ձեռս ձեր մատնելով մատնեցից: Իբրեւ գես-  
 պանքն հասին ի Ստամպոլ եւ զգիրս տվին,  
 50 խօնթբարն, վէղերնին եւ ամենայն իշխանքն  
 մեծամեծօք հանդերձ ցնծացեալ բերկրեցան  
 եւ ձայն խնդութեան եւ ուրախութեան տային.  
 Եւ աւետիս տային ասելով, թէ Օրս այս մեծ  
 է եւ երեւելի, զի ահա մատնեաց Աստուած

55 զբրիտոնեայս ի ձեռս մեր. կատարեցաւ  
 բանն Մէհմէտի, զի ահա առնումք զխզըլ ալ-  
 ման. եւ խոյս տվեալ միմիանց խրախոյս  
 բարձին եւ գրեցին հրովարտակ ի Պոնայու  
 պէկլէրպէկին եւ ի Պէլլըրգատ, ի Սիլիսդրայ  
 60 եւ ամենայն Ուռումէլի, Պուլզարք եւ ծովե-  
 գերայքն, Սէլէնիկ եւ այլ տեղիս, այլ եւ  
 յայնկոյս ի Մաղրապ, ի Մալըր, Ռատօսն մեծ  
 եւ ի Կիպրոս եւ որ շուրջ եւ հուպ մերձա-

կայք եւ սահմանակիցք էին Ֆուանկացն, զի  
 65 փոյթ ընդ փոյթն ժամանեալ հասցեն ի Վէ-  
 նէտիկ, աւելի քան գերկոտասան բիւր. այլ եւ  
 առաքեաց նամակ տուքին, թէ Ահա առաքեցի  
 ձեզ օգնական երկոտասան բիւր՝ քո զրա-  
 մով, ձեժմ վաղվաղակի. եւ ես զկնի գամ  
 70 ձեռ զօրօք իմով, արքունի գանձովս իմով.

Քանզի կամէին տիրել Փոանկաց աշխարհին:  
 Բայց Աստուած ոչ յաջողեաց, այլ Աստուած  
 ցրուեաց զխորհուրդս ամբարտաւանից եւ  
 հեթանոսաց: Քանզի լուաւ թագաւորն Սպա-  
 նիու եւ թագաւորն Ֆրանցիու եւ այլ մեծա-  
 մեծ իշխանք, թէ յարեաւ ի վրայ քրիստո-  
 նէից եօթնադարեան վիշտայն եւ Վէնէտիք ով  
 է բանալի եւ մուտ Ֆուանկաց երկրին. եւ թէ  
 ապստամբեցաւ եւ տուքն. ի խոր խոցեցան.  
 Եւ փութով հրեշտակ առաքեցին առ Փափն,  
 մեղադրելով նմա թէ այտ ինչ բան եղեւ, որ  
 մեծ աղմուկ եւ խռովութիւն եկն աշխարհս  
 մեր. կամիք զմեզ մատնել ի ձեռս թշնա-  
 մեաց. եւ թէ ոչ հաշտիս ընդ Վէնէտիք, կո-  
 րեաւ թագաւորութիւնն մեր եւ եղեւ բաժնի  
 անօրինաց:

Իսկ Փափն լուեալ զայս լուրս բոթալի-  
 անկաւ ի մեծ սուգ, որպէս հովիւ հոգեւոր  
 զլջացաւ իբրեւ փոշման եղեալ արածին եւ  
 պատերազմին. եւ զրեաց առ նոսա թէ Որ-  
 պէս կամիք այնպէս արարէք, միայն թափե-  
 ցէք զերկիրս ի ձեռաց այլաղբեաց: Ապա  
 Ալամանաց մեծ իշխանն որ սահմանակից էր  
 եւ սիրելի Վէնէտիքու տուքին, այլ իշխանօք  
 որ բազում աղերսանօք եւ աղաչանօք հաղի-  
 կարացին համոզել եւ դարձուցանել ի հաշ-  
 տութիւն. եւ առեալ տարան առ Փափն ով  
 խոնարհեալ եպագ զաջն. եւ նա օրհնեաց  
 զնա եւ զքաղաքն. եւ քահանայից հրաման  
 ետ դնալ: Եւ եղեւ ուրախութիւն մեծ եւ խա-  
 զաղութիւն աշխարհն Ֆուանկաց: Իսկ զօրքն  
 Տաճկաց որ արաղընթաց վաղէին իբր ի հար-  
 սանիս, իբրեւ լուան զհաշտութիւն՝ ամօթա-  
 լից յետս դարձան: Փառք Աստուծոյ:

22 հիւսեցին: — 36 փիւրք փիւրուց: — 39 ան-  
 յասուածարար ընդէմ: — 48 դէպպանքն: — 53 աւետիս:

(Շարունակելի:) Հրատարակեց՝ Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ՔԱՋՆ ԼԻՊԱՐԻՏ**  
**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՏԱՂԵՐՈՒ ԵՒ**  
**ՋՐՈՅՑՆԵՐՈՒ ՄԷՋ**

Յորտեղ նստին հայ ու սեղան  
 ժողովք բազումք եւ շատ իշխան,  
 Յիշեն ըզնա սուրբ քահանայք,  
 Տէր ողորմի ստեն նրմա:

Պատմական դէմք մըն է Լիպարիտ, Կի-  
 լիկիոյ հայկական թագաւորութեան վերջա-  
 լոյսի ժամերուն պայծառացած հօրք եւ պա-  
 տերազմասէր աւագ մարաջախտ մը, որ իւր  
 բաղկի ուժով հայրենի հողին պաշտպանն է  
 հանդիսացած, վայելած է հայ ժողովուրդին  
 վստահութիւնն եւ համակրանքը, ու ինկած  
 է պատուոյ դաշտին վրայ իբրեւ նահատակ  
 մը հայրենիքի ազատութեան:

Ժամանակակիցները արձանագրած են իր  
 արիական գործերը իրենց տարեգիրներու  
 մէջ, բանաստեղծները երգած են անոր հե-  
 րոտական մահն եւ ժողովուրդը յաւերժա-  
 ցուցած է իր նահատակին յիշատակը զրոյց-  
 ներու մէջ:

Հերոսին փառքը ճառագայթած է իր  
 քրոջ վրայ, որ հայ ժողովրդական զրոյցին  
 մէջ կը ներկայանայ ըմբշամարտուհի մը,  
 կաշմբուռն զօրութեամբ:

Մինչեւ այժմ ծանօթ էր Լիպարիտ իբրեւ  
 պատմական դէմք Կիլիկիոյ ժամանակագրին  
 այն կարճ տողերէն, որոնցմէ օգտուած էր  
 Հ. Մ. Չամչեան եւ զորոնք քաղուածարար  
 յառաջ բերած էր Հ. Ղ. Ալիշան. իսկ իբրեւ  
 ժողովրդական հերոս՝ այն կրկին տաղերէն,  
 զորոնք երգած են Յովհաննէս Թլիւրանցի  
 եւ Սարգիս Կաֆայեցի:

Բայց հիները այնպէս ալ ուրիշ չեն գրա-  
 նուած նկատմամբ հայ հերոսին: Պատահած  
 եմ յրնթացս իմ դեղերուձմերուս հին ձե-  
 ոագիրներու մէջ նոր նիւթերու, որոնք թէ  
 պատմական Լիպարիտի դէմքը կը լուսաւո-  
 րեն եւ թէ հայ հերոսին փառքը կը պան-  
 ծացնեն: Թէ պատմական յիշատակարաններն  
 եւ թէ զրուցախառն պատմութեանքը ար-  
 ժանի են ուշադրութեան. վերջիններս կը  
 բանան մեր առջեւ նոր էջ մը հայ դիւցազ-  
 ներգական գրականութեան:

Այս տեղ իմ ջանքս պիտի ըլլայ ի մի  
 հաւաքել Քաջին Լիպարիտ անձին հայոց  
 ծանօթ եւ անծանօթ նիւթերը, պատմական

յիշատակարաններն եւ զրուցախառն պատ-  
 մութեանքը, թողլով անոնց պատմական  
 վերլուծումը գրութեանս վերջը:

Ա.  
 ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱՋՆԻ ԼԻՊԱՐԻՏԻ

Առաջին տեղը պիտի շնորհեմ զրուցա-  
 խառն պատմութեանքի մը, զոր գտած եմ նախ-  
 կին Լազարեան ձեռագրանի Թ. 140 ձեռա-  
 գրին մէջ, թուղթ 129ր—134ա, «Պատմու-  
 թիւն քաջին Լիպարիտն է ասացեալ» խո-  
 րագրով: Ձեռագիրը կ'ամփոփէ իր մէջ Մով-  
 սէս Չուղայեցւոյ ժողովածոյքը, որ վերնա-  
 գիր ունի. «Գիրք համառօտ ժողովածու  
 վասն ի պատրաստ գոյոյ ի պէտս մտառու-  
 թեան եւ տեսողութեան բանասիրաց... հա-  
 տաքեալ ի նուաստ Մովսիսէ մեղսամած Ջու-  
 զայեցւոյ, ի թուականութեանս Հայոց ՌձԽԳ  
 (1695) ամին». օրինակած է 1762ին տէր Աս-  
 տուածատուրի որդի տէր Յովհաննէս քա-  
 հանայ «ի վայելումն Գօթայեցի տէր Աւետիս  
 վարդապետին»: Որչափ նկատած եմ, պատ-  
 մութեանքը կը պահպի Մ. Չուղայեցւոյ ուրիշ՝  
 աւելի հնագոյն օրինակներու մէջ. եւ արդէն  
 նիւթն ալ անյարմար էր այն ժողովածոյքին  
 նկարագրին. հաւանօրէն ուրիշի մը, թերեւս  
 Յովհաննէս քահանայի զբէն մուծուած է  
 հատուածս ժողովածոյքին մէջ, իբրեւ ԼԲ.  
 զլուխ:

Ինչպէս կ'երեւայ, պատմութեան անձա-  
 նօթ հեղինակը գրի ստած է ինչ որ լսած է  
 անդիւր աւանդութենէ: Թլիւրանցւոյ տաղը  
 հաւանօրէն ծանօթ եղած է իրեն. բայց ունի  
 ինչ ինչ կէտերու մէջ շեղումներ անկէ. մինչ  
 Թլիւրանցին պատմական հերոսը կ'երգէ,  
 պատմութեան հեղինակը կը նկրտի հերոսէն  
 դիւցազն մը կերտել: Արդեամբք ալ արձակ  
 դիւցազններգութիւն մը հարկ է տեսնել հոն,  
 որ Կիլիկիոյ սիրտը ձեւ եւ կերպարանք ա-  
 ռած, գաղթող ժողովրդեան հետ աշխարհէ  
 աշխարհ ընթացած, բերնէ բերան պատ-  
 մութեան, ի վերջոյ յանձնուած է թղթի:

Պատմութեանս կից կայ ուրիշ պատ-  
 մութեանք մը՝ Լիպարիտ քրոջ մասին, որ  
 նոյնպէս հետաքրքրական է: Ինձ ծանօթ է  
 այս պատմութեանքին մէկ ուրիշ փոփոխակը,  
 ուր հայ ըմբշամարտուհին կը ներկայանայ  
 Եօթը քաջ եղբայրներու քոյրը: